# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

**Գնային առաջարկների բացման նիստի**

**01.12.2017թ. 11.00-ին**

*Գ. Ազատան փ19 շ17*

*ՀՀ Շիրակի մարզի <<Ազատանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ*

Գնման առարկա է հանդիսանում 2018թ ՀՀ Շիրակի մարզի <<Ազատանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի (սննդի ծանրոցի) ձեռքբերումը:

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Ոսկանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Սուքիասյան, Թ . Հլղաթյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Իկիլիկյան

*1.Ներկայացվել է գնային առաջարկ.*

*ա) Ա/Ձ <<Հակոբ Սոսյան>> ք.Գյումրի Ա.Խաչատրյան 9/6 հեռ.093958181*

*2.Գնային առաջարկներ ներկայացրած մասնակցի ծրարը կազմվել և ներկայացվել են սահմանված կարգի պահանջներին համապատասխան:*

*3.Գնային առաջարկներ ներկայացրած մասնակցի հայտում առկա են պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ մասնավորապես*

1) գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

2) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

3) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում որակավորումը հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը.

4) իր կողմից հաստատված գնային առաջարկ.

5) հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով, ապա հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի կամ բանկային երաշխիքի բնօրինակը.

7) իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

8) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

9) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

10) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

11) գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

12) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

*4. Գնային առաջարկ ներկայացրած մասնակցի կողմից փաստաթղթերը կազմված են սահմանված պայմաններին համապատասխան:*

*5. Մասնակիցն առաջարկել է սննդի ծանրոցի հետևյալ գինը.*

| *Հ/Բ* | *Սննդամթերքի անվանումը* | *Ա/Ձ <<Հակոբ Սոսյան>>* | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ /տառեր ով և թվերով/ | Քանակը |
| 1 | Սննդի ծանրոց | 3487500/երեք միլիոն չորս հարյուր յոթանասուն հինգ հազար/ դրամ | - | 4500 |
| 2 | | | | |

*6. Գնային առաջարկների բացման նիստում գնահատող հանձնաժողովը որոշեց կողմ՝3, դեմ՝0 ձայների հարաբերությամբ՝*

*Առաջին տեղն զբաղեցնող մասնակից ճանաչել Ա/Ձ <<Հակոբ Սոսյան>> -ին*

*7.<< ՇՄԱԴ –ԳՀԱՊՁԲ2018/1>>ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել ՊԵԿ-ի կողմից եզրակացություն ստանալուց հետո ՀՀ Շիրակի մարզի <<Ազատանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:*

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Ոսկանյան

Անդամներ՝ Ա.Սուքիասյան

Թ.Հլղաթյան

Քարտուղար՝ Ա.Իկիլիկյան